

շատ մը վանքերուն, ճոխ իր շինուածքին կարկառուն փաստերն և ամրակուռ վրկաներն են կողերուն մէջ փռուած սրբաբառաշ քարերու կոյտերը, խոշոր սիւներու և խոյակներու կոթողները հին շէնութիւնը և փառքը պատմող, հաստաբեատ ծառեր, և լոյսաղբիւրը որ գեռ կը շաչէ, կը շրուշրուշ ամբողջ ծառաստանը, ու արտերը արգասաւորելով. շէնքերու մնացորդը հիւմերէն վեր հագիւ մի մի մեղր մնացած : Հարուստ է եղած դուռով, այնպէս որ ոչ խարներու կաթը ագուգաներով կը հոսեցնեն եղեր Ներքը վանք (վարի վանք) : Ունեցած է միաբանութիւն, բայց իրենց գործերէն ու գործունէութենէն ոչինչ մնացած է...

Շարաթացեալ Ներքը վանք (վարի վանք) Պօղոս Պետրոս : Վերի վանքէն մինչեւ վարը մէկ ժամու հեռաւորութիւնով : Այս վանքն եւս ոչինչ ունի յիշատակելի անցեալի օրերէն, շէնքերու փրլատակներ կրաշաղախ որմերու, փշուր փսփր եղած սիւներու, որոնց մեծ մասը տարած շէնքերու գործածած են. երբեմնի իր դաշտին գոգին մնացած են քանի մը

խաչքարեր, ինչպէս վերի վանքինն ալ, ուր ուխտաւորներ կ'երթան աղօթելու, մատաղներ ընելու, ըստ սովորութեան պարելու, ուտելու ու խմելու : Իրենց շինութեան թուականը ժեղարու առաջին տարիներուն պիտի լինի, երբ այսպէս բոլորուած են Բագրատունիքը, Բինկեանի Ս. Երկը մանկանցը, (վարի վանք)ը, Խօճայ վանքն եւս որ բոլորովին ուխտավայրի մը վերածուած էր : Վերի վանքին ու Սենքերիմին մէջ կայ գիւղ մը բոլորովին աւերակ — Էսկի քէօյ — սա Սենքերիմի բնակութեան յատկացուած, կամ աւելի ճիշդը ամարանոցի, բնագեղ տեսարանով մը համատարած լեռներու գոգին, ու դիրքով մը անառիկ, և արդէն Բերդը իր ցցուածքով կը հովանաւորէ գիւղը, հապաքարկողեր որչափ առաւել :

Ինչ մտքեր արդեօք թողին ու գրչին տուին հոգեւինս էջեր ու տաղեր որոնք այսօր պիտի լուսաբանէին ու լուսաւորէին հոգեւոր աշխարհներն, ու բարոյական մարգարանին պիտոյն առատ, ու պարտք բազմապահանջ :

(Շարունակելի) Գ. ԱՐԲԵՊՍ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

ՔՆԱՐ ՆԱԽԵԱՅ

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ

Սերով սիրելի որդին
Իջեալ յերկիր ի ստորին
Ի կուսէն զգեցաւ մարմին
Նմաւ ի Բեթղեհէմին :

Ահեղ սքանչելիք լինին.
Մոգը յարեւելից եկին.
Առաջնորդէր լոյսն աստեղին,
Եկեալ տեսին ծնունդ կուսին :

Սուրբ կոյս, խորան սրբութեան,
Որ ծնար զՔրիստոս մեծայն,
Լէ՛ր բարեխօս անխափան,
Ըզմեղ պահէլ անասան :

British Museum

ՄԷԿ ԱՐՁԱՆԱԳ՝ ԻԻ ԵՒ ԶԵՌՔԻ ՄԱՍԻՆ ՈՐ «Կ'ԸՍՈՒԻ ԹԷ» ԳՏՆՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՈՒՂԻՂ, կէս դարուց ի վեր Ս. Ղազարու տպարանից բաց թողնուած հրատարակութիւնների մէջ շատ անգամ յանձնարարուած կայ կարգաւ մենագրութիւն որ նուիրուած է պղնձաձոյլ մէկ արձանի գլխուն եւ զոյգ մի ձեռների որոնք՝ երկուքն էլ՝ կը թուին լինել՝ մուրճի հարուածներով փշրուած մէկ ամբողջի մասեր :

Գեղարուեստի գործի հնէաբաններ կ'ընդունին որ այդ փշուրքը հին յունական (400 Ն. Ք.) այսպէս կոչուած CNIDIAN ժամանակաշրջանի մէկ գործն է :

Հակաճառողներէ ոմանք կը կարծեն թէ դա Պրաքսիտելի մէկ երկն է. կան էլ որ կը պնդեն թէ դա աւելի շուտ Սոպրասի գործն է : Ոմանք կը հաւատան թէ Ափրոդիտէի արձանն է, ոմանք էլ կը հաւանին թէ Արտեմիան է՝. բայց չգիտեմ՝ էլ ո՞ւմ կողմից տարածայնուել է՝ Հայերի մէջ՝ որ դա՝ Արշակունեաց շրջանին Հայաստանում պաշտուած Անահիտ աստուածուհու ի պատիւ կանգնեցրած մէկ արձանի փշուրքն է :

Տասն տարի աւելի վաղ քան իմ յաշուել ձեռքի տակ ունենալը «Բագմալիկ» ի ԽԱ. թուահամարը յորում լոյս տեսած է հնութեան բեկորների նուիրուած այդ ուսումնասիրութիւնը, ես, Լոնտոնում, British Museumի Greek and Roman antiquitiesի բաժնում՝ ուր պահուած կան հարցասիրութեանս առարկայ արձանի մասունքը՝ աշխատեցայ պարզաբանել՝ Միթի. Միաբանութեան պարբերաթերթի միջոցաւ ձայնարկուած վարկածին վաւերականութիւնն առանց կարենալու ամենադոյզն չափով բաւարարել իմ հետաքրքրութիւնը :

« Բագմալիկ » ի ԽԱ. թուահամարի մէջ

ԲԱՁՄ. ՅՈՒՆՈՒՄ 1934

լոյս տեսած ուսումնասիրականը քարգմաւնաքիւնն է այն ժամանակ (1883) հեղինակութիւն (կ'ենթադրեմ) համարուած գերմանացի գիտնական ԷՆԿԷԼՄԱՆՆԻ որի ուշադիր ընթերցումով ես ի սպառ տեղիք չեմ գտնում այն ոգեւորուած (և մի քիչ վերվերիկ) ներածութեան որ, Տեղեկաքիւն վերնագրի տակ, կ'առաջնորդէ գիտնականին քննական ուսումնասիրութիւնը : Ներածութիւն տեղեկութիւնս գրողը չէ դրել իւր ստորագրութիւնը որով ընթերցողին կը մնայ խորհիլ՝ իցէ պարբերաթերթին այն օրերի (1883 Յ. Ք.) խմբագիրն է դրա հեղինակը : Սա, տեղեկանալով հնութեան փշուրքիս շուրջ խօսուած և գրուածներին, հանութիւն ունեցել է հաւատալ թէ դա՝ հնախօսական շօշափելի փաստ է որ կը հաստատէ «Խորեկագոս պատմ. Բ. Գրոց, ԺԲ, ԺԳ, և Արարակեղոսի ձԹ, ձԺ և ձԺԳ զբոյսները» և, հրճուանքով կը յայտարարէ «Հիմա այսպիսի մնացորդը հնաքեանց՝ աւժիտելի կերպով կը վաւերանան մեր Գ. և Ե. դարու մատենագիրքն որ նոր յարգ և փառք կ'ստանան» : Ապա, « Ընդ նմին և գործք քաջութեան մեր Արշակունի աշխարհակալաց, Հեղինական զից ընդունելութիւնն ի Հայոց իրենց ազգային պաշտամանց և աւանդութեանց վերածմամբ,

1. WALTER'S, «Select Bronzes». — A. H. SMITH, M. A, «Select subjects in the department of Greek and Roman antiquities», — W. R. LETHABY, «An outline History of Armenian Architecture» from notes in French by A. IETVAJIAN (Journal of the Royal Institute of British Architects, 1922 vol. XIX, N. 19). — ENGELMANN (Թրգմ. «Բագմալիկ». Թ. ԽԱ. 1883).

և յետոյ Լուսաւորչի և Տրդատայ քրիստոնաւոր ձեռաց անխնայ հարուածովը՝ անոնց մանրիւն և թաւալիւ ընդ գետնեալ»:

«Բագրուալեայ»-ի (ԽԱ. էջ 130) այս տեղեկութիւն — ներածականի անյայտ խրմբագրողը իմացած լինելով որ British Museum-ի ձեռք բերած այս հնութեան **շուրջ արտայայտուող ժամանակին հեղինակաւորներ** «ապշտրեաւք զարմացել են **և չեն կարողացել իրենց հաշիւ տալ** թէ ինչպէս կրնայ ըլլալ որ յունական ճարտարութեան ամենէն գեղեցիկ ձեռագործ մի՞ ձուլուած Բրիտտոսէ չորս դար առաջ, որ է բսել Յունաց ճարտարարուեստից աւանդէն ծաղկեալ ժամանակն, թաղուած ըլլայ հեռաւոր և բարբարոս Հայաստանի անկիւն մը» հարցը համարել է բաց թողնուած և այդքանով էլ իւր հետաքրքրութիւնն սպառել է: Մեր օրերի մէկ հնագէտ բանասէր սկիզբէն եւեթ կարեւորութիւն կու տար և կը ջանար ստուգել հնախօսական պատմական շահեկանութիւն ունեցող այս կարգի առարկային գտնուելուն որպիսութեան ամենամանրամասն պարագաները: Ս. Ղազարու Միաբանութիւնը իւր գտնուած տեղւոյն, կազմին և կեցութեան պայմաններովը լիովին նպաստաւոր գիրքի մէջ ՀԱՅ ՄԱՐԿՈՅ կազմակերպութիւն, որ 1870-1880ականներէն շատ առաջ դեռ ունէր ձեռնհաս ուսումնականներ, որպէս ուղղակի շահագրգռուած կողմ, զարմանալի է որ թողել է հարցը քնել և, մինչեւ այսօր էլ British Museum-ի ուղեցոյց ցուցակներէ մէջ այդ հնութիւնը արձանագրուած է «Said to have been found at Satala, in Armenia Minor» և, այսքան միայն:

British Museum-ը հնութիւնս ձեռք բերել է «զբեթէ ոսկւոյ գնով» 1873 թուականին (իմա, «Բագրուալեայ»-ի մէջ առաջին անգամ լոյս տեսած պատկերազարդ ուսումնասիրական թարգմանածից 10 տարի առաջ) ինձ անյայտ ոմն իտալացի և, հնութիւնների առեւտրով զբաղող Castellani-ից և որ այն ժամանակ՝ «մեծ հետաքրքրութիւն, զարմանք և հիացումն պատ-

ձառնը է հնութեան և գեղարուեստի սիրողաց»:

«Բագրուալեայ»-ի մէջ 1883 թուականին լոյս տեսած գերմանացի քննասէր Լենկէլմանի թարգմանածոյ ուսումնասիրութիւնից հետագայ տարիներում ոչ ինքն «Բագրուալեայ»-ի տեղեկատուն՝ և ոչ էլ այլ ոք հայ, այլ տեղ, մեզ ուղղակի շահագրգռող այդ գիւտի մասին ասուած և խօսուածներով զբաղած լինելը չեմ գիտեր: Եղբւր եմ՝ բաց ի Լենկէլմանից՝ ուրիշ քննասէր հնէաբաններ որ իրենց հետազոտութեանց առարկայ դարձրած լինին հին յունական արձանագործութեան այս շքեղ փշուրքը որի մասին antiquary Castellani-ն ասել է թէ գտնուած են Հայաստանում: Կը ցուցիմ որ ինձ դեռ չյաջողուեց հանդիպիլ այսպիսիին: Ի վերջոյ ո՞վ է այս հնութիւնների վաճառական Castellani-ն որի յայտարարութիւններին British Museum-ում թերահաւատութեամբ են վերաբերուել: Լենկէլման՝ ինքն էլ՝ հնութեան բեկորներին նուիրուած իւր ուսումնասիրականի մէջ (որ ի սպառ այլ հոյի վրայ մի հետազոտութիւն է) Castellani-ի հաստիացումներին արհամարհանելով վերաբերուած է և կարեւորութիւն չտալով ասում ու անցնում է:

Հնութեան բեկորներին երեւան եկած տեղ Սատաղա գիւղի աշխարհագրական դիրքի մասին «Ի Հայաստան, Երևանէն քիչ հեռի Տրապիզոնի հարաւային կողմը» արտառոց յայտարարութեամբ՝ Castellani մեզ իրաւունք կու տայ անմիջապէս ձայնակցիլ գերմանացի քննասէր Լենկէլմանի հետ և համարել նրա ասածը, հէնց սկզբից եւեթ, «ո՛չ բոլորովին վստահելի վկայութիւն»:

Castellani՝ առեւտրը յաջողցնելու միակ մտադրութեամբ ոգեւոր փերեզակի աչքաբացութիւնով antiquary, իւր յաճախորդներին տուել է յիշեալ գիւղի հասցէն և, մի քիչ հասարակ խանութպանի

1. Տես «Բագրուալեայ» 1883. Թ. ԽԱ. էջ 130.
2. Նոյն տեղ.

վայել իւր հնարամտութեան մէջ, չէ կարողացել խորհիլ, որ, գնորդներ կը գիտենան թէ ինչ է Սատաղան, ուր է նրա տեղը և ինչ պատմութիւն ունի...:

Մեզ համար կարեւոր է նաեւ յիշել և գիտենալ որ, ոչ ոք չէ հաւատացել, որ, «Հնութեան այս բեկորներին վերջին ծախողը Castellani-ն է»: Դրանք մինչեւ նրա ձեռք անցնելը եղել են այլեւայլ ուրիշ ձեռքերում...:

Հազար ափսոս որ Լենկէլման իւր ուսումնասիրականի մէջ զանց արել է արձանագրել այն «այլ և այլ դիպուածներն որոնք պատահած են հնութեան բեկորներին հետ քանի որոնք դեռ չէին բերուած Բրիտանական թանգարանը»:

Այս դէպք եւ դիպուածներին մասին (որոնց տեղեկաբերը կ'երեւի էլի ինքն՝ հնութիւնների առեւտրով զբաղող Castellani-ն է) նա ասում է. «այդ ամենը որչափ ալ այլ և այլ մասերով հետաքրքրական ըլլան» բայց եւ իրեն՝ պարզել առաջադրածը «խեղորոյն համար կարեւորութիւն ունեցող քանի չեն»:

1921ին South Kensington-ի մուսիոնում իմ «Հայ Բրիտան. Ճարտարապետութեան յաշտութեան և դրոշմների» նկարների ցուցադրութեան օրերին, Անգլիայում ամենից ձեռնհաս գիտնական համարուած Prof. W. R. LETHABY՝ որ իմ գործի catalogue-ի յառաջաբանը գրելու պատիւն արեւ ինձ՝ խնդրեց ինձնից զբեւ մի անփոփոյթ մեր Հայաստանում Զ-ժ. դար զարգացած դաւանանքի շինութիւնների ճարտարապետութեան շուրջ: Եւ կատարեցի նրա խնդիրը և տուի նրան ֆրանսերէն զրաժս մէկ Résumé որ նա թարգմանելով լոյս ընծայեց «Journal of the Royal Institut of British Architects»-ի մէջ: Գեղարուեստի բանասիրութեան այս մարզի մէջ իմ և նրա զազափարական մտերմութեան այս առիթով երբ ես՝ իմ տեսութիւնները հիմնաւորելու հաշուով՝ իմ յիշեալ Résumé-ի մէջ հարկադրուեցի իմ խորհրդածութիւններն անել նախաքրիստոնէական ժամանակաշրջանի Հայաստանի

պաշտաման յատուկ կառուցուածքներին շուրջ և ոճի և տիպի որպիսութեամբն դեռ անձանօթ մեր մեհանների մասին ասել, յիշեցի British Museum-ի մէջ պահուած արձանագլխի և ձեռքի մասին: Պատկառելի գիտնականը յանցանքի մէջ բռնուած աշակերտի պէս այլալուեց և խոստովանեց որ այս ուղղութեամբ բաները չէր գիտեր դեռ: Նա, առանց ժամանակ կորուսելու, գնաց B. Museum և աշխատեց ստուգել իմ ասածներն առ տեղեւան իսկ: Գրութեանս հետ կու տամ նրա հետախուզութեան արդիւնքը որ, որպէս շօշափելի փաստ իմ ասածներին, արդարեւ կայ և կը մնայ Բրիտանական թանգարանում, բայց և մեծարգոյ ուսուցչապետին խուզարկութիւնն էլ դեռ չպարզեց իմ՝ որպէս հայու և շահագրգռուող կողմի՝ հարցասիրութիւնը, թէ, իսկապէս, ստոյգ է որ հին յունական արձանագործութեան այդ շքեղ մատուցող գտնուած են Հայաստանում Երզնկայից ոչ հեռի Սատաղ գիւղի տանձակներում:

Prof. LETHABY-ի ծանօթագրութիւնը.

«The reference to Greek statues of bronze brought to Armenia and their violent destruction are most interesting in regard of the fine head of Aphrodite in the British Museum found at Satala, now Sadakh (near the ancient Eriza). Both this head and the bronze hand found with it bear manifest evidence of violent destruction and it is tempting to think that they may be parts of one of the actual Greek bronze statues mentioned by Moses of Khorene (Book II., ch. XIV.). From the time of the acquisition of the head it has been usual to date it as a four-century work. Vague doubts are expressed about the hand, mainly, I think, because the style of this may not seem so fine as that of the head. This hand would prove the figure to have been an Aphrodite of the Cnidian type and again there is a tendency to question whether the head really is that of Aphrodite. Further, it is said that the head «reflects the style of Scopas rather than of Praxiteles», the author of the Aphrodite of Cnidus (Walter's Select Bronzes).

All these remarks spring, I think, from the desire to sustain the fourth-century date.

In the catalogue of bronzes it is allowed that «the hand, from its style and the condition of the bronz appears to have belonged to this statue.» It is added however, «on these grounds it has been argued that the original was a copy of the Cnidian Aphrodite, but it is by no means certain that the head represents Aphrodite.»

(Ընդգծումներն իմն են. — Ա. Ֆ.)

W. R. LETHABY, «An outline History of Armenian Architecture» in the Journal of the Royal Institut of British Architects, 1922, vol. XXIX N. 19.

Յոյն արուեստի այս գեղեցիկ փշրանքը B. Museum-ում ցուցադրուելու թուականն է (1873) յետոյ թուում է թէ շահագրգռուողներ ուշադրութեան առած են գիւտի մասին բոլոր կարծիքների պատմութիւնները որոնք, ինչպէս երևում է Էնկէլմանի խօսքից, «Հետաքրքրական են եղել, այն էլ դեռ այլ և այլ մասամբ»: «Բազմալեզ» որպէս հայ բանասէրների այն ժամանակուան (1883) միակ ուսումնասիրութիւնը՝ Էնկէլմանի քննասիրականը թարգմանաբար տալէ յետոյ այդ հարցի շուրջ լոյս տեսած այլոց էլ ուսումնասիրութիւններիցը քաղելը թուում է աւելորդ է համարել. այլապէս, «Բազմալեզ»՝ հետագայ ուսանողների համար մեծապէս գնահատելի գործ կատարած կը լինէր և, իցէ թէ, Էնկէլմանի համար անկարևոր համարուած բաներ հնար կու տային մեզ լոյս սփռել վաճառական Castellani-ի վարկածների վրայ, որոնց՝ մի անգամ էլ կը կրկնեմ, Էնկէլման իւր քննասիրականի հէնց սկզբում դեռ ասում է «ոչ բոլորովին վստահելի վկայութիւնն այն անձի որ յետոյաբար բերել է հնարեան այս երկու կտորները»:

Էնկէլման՝ արձանագլխին հետ ի ցոյց դրուած ձեռքին էլ միեւնոյն միաւորին պատկանած լինելուն շուրջ յարուցուած կասկածների դէմ խմբագրած իւր փաստաբանութիւններով թէեւ հաւատում է որ զբանք երկու տարբեր միաւորների

մասեր չեն, բայց, հէնց այստեղ էլ էլի մի անգամ թերահաւատութեամբ արտայայտում է այն մարդուն վկայութեան (իմա Castellani-ն) որուն ձեռք անցած են հընդութեան այս փշուրքը իրենց գտնուելէն վերջ: Դուրս է գալիս որ Castellani-ն ոչ թէ անձամբ երևան հանել է այդ հնութիւնը, այլ իւր կարգին մէկ ուրիշէ ձեռք բերել է: Արդ, հարց կը ծագի այդ մէկ ուրիշի և իւր կատարած գիւտի պարագաներին. և թէ ի՞նչ ճամբաներով հասաւ այն antiquary Պր. Castellani-ի հաւաքածոյի մասն կազմել. հուսկ յետոյ էլ «գրեթէ ուկշոյ կշռով գնուելով (Բզմվւ. 1883. էջ 130) յԱնգլիացոց գետնեղեցու իրենց հարուստ Բրիտանական թանգարանին մէջ»:

Ի վերջոյ, Էնկէլման իւր քննասիրականի վախճանին երբ ասում է. «Դժուարին է զոտցել րէ ինչպէս այս արձանն Հայաստանի այդ հետաւոր կողմերը գնացել է. և երաւորելով որ տեղոյն համար (Ստատալայի) ըստածն ուղիղ է եւ ոչ րէ ձգնարտաբիւր բողարկելու հնարք մը»: Յայտնի է թէ կասկածում է Castellani-ի ասածին: B. Museum-ում այս կարգի հարցերի մէջ ձեռնհաս աշխատակիցներ եթէ դոյզն չափով էլ վստահել էին Castellani-ի վարկածներուն, այն ամենալուրջ թանգարանի տեսչութիւնը 60 տարուց ի վեր նորից լոյս ընծայած իւր catalogue-ներում չէր գրեր անփոփոխ, չոր ու ցամաք «Կ'ըստի րէ ի Հայաստան գրուած է»: Այս «Կ'ըստի րէ»-ով կասկածի տակ մնացել է վարկածին վաւերականութիւնը և հարցը թողուել է աւելի ձեռնհասների քննութեան:

Հարցին մէջ Հայաստանի անունը առաջ քշուած լինելով մենք՝ որպէս ուղղակի շահագրգռուած կողմ՝ պէտք էր որ աւելի եւ ունդուն և հետեւողական հետաքրքրութիւն ցոյց տուած լինէինք ճշտելու համար վարկածների ստուգութիւնը: Արդ, խօսքն աւելի շատ գիտցողներին է. ես ուզում եմ սովորեմ:

Ա. Ֆ. Ե. Թ. Վ. Ս. Ս. Ս.

20 Dwight Str.
Boston Mass.
(U. S. A.)

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿԶԲԻՑ ՄԻՆՁԵՒ 70-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ - ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմալեզ 1933, էջ 544)

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԵՏ

ԴՅՆ ԵՄ զրուում Լէօն և Մ. Աղաբէկեանը

Լէօ: Թատրոնական պատմագիրներից Լէօն կանգնած է որոշ գծի վրայ: Այդ գիծը, սակայն, միանգամայն անորոշ է, որովհետեւ նա արձանագրել է միմեանցից տարբեր և իրար հակասող կարծիքներ:

Նրա առաջին եզրակացութիւնը հաստատում է, թէ Ռուսահայ թատրոնն սկիզբ է առել 19-րդ դարի երեսնական թվականների առաջին կեսերին, 1836 թվականին, Թիֆլիսում:

Ո՞րն է, սակայն, Լէօն աղբիւրը, ի՞նչ դժուրմէնտից նա քաղել է իր տեղեւորները: Նրա աղբիւրը, ակունքը թատրոնական հին գործիչ Մարկոս Աղաբէկեանի դասախօսութիւնն է, որ կարդացել է նա 1879 թվականի Յունիսի 15-ին կարնոյ դպրոցի դահլիճում «Հայկական քաղաքի անգլիական խորագրով: Դա հայ թատրոնին նուիրուած առաջին դասախօսութիւնն է: Լէօն համարեա նոյնութեամբ կրկնել է «Փորձ»-ում (Թ. 10) տպւած այդ յօդւածի միտքը: Մեր ասածը հաստատուելու համար նախ ահանենք, թէ ի՞նչ է զրուած Աղաբէկեանը:

Աղաբէկեանի յուսարանորիւնը: Աղաբէկեանը Թիֆլիսի հայ թատրոնի պատմութեան սկիզբը համարում է 1836 թվա-

կանը: Սակայն նա իր տեսակէտը չի հիմնաւորում փաստացի տեղեւորներով, այլ միայն յիշողութեան վրայ հիմնելով՝ արձանագրում է իր կարծիքը:

Առհասարակ պիտի նշել, որ թատրոնական պատմագիրների շարքում Աղաբէկեանը շատ բարեխիղճ է: Մանաւանդ թվական տեղեւորներն ու պատմական փաստերը նա արձանագրում է խիստ վերահասութեամբ: Ահա նրա յիշատակագիրը Ռուսահայ թատրոնի սկզբնական շրջանի մասին.

— «Ինչպէս որ Արեւմտեան հայոց թատեր վրայ միմիայն յիշողութեանս ապաւինելով խօսեցայ, առանց մի աղբիւր իմ աչքի առաջ ունենալու, այնպէս էլ Արեւելեան հայոց՝ այսինքն Թիֆլիսու հայոց թատեր մասին պիտի անեմ միեւնոյն պատճառով. կարելի է, որ թվականի եւ անունների մասին շփոթւիմ, դրանց որոշ յիշելը անկարող լինելով, այդ մասին ներողութիւն եմ խնդրում իմ պարոնայցը:

Թիֆլիսում առաջին անգամ թատր յօրիւնդն է լինում, նոյնիսկ Թիֆլիսու հայոց կեանքէ վեր առնելով, պ. Գալուստ Շերմազանեանցը, բայց անփորձ թատերական արհեստում, նա կարծել է թէ՛ թատր ձեւացնել կամ թէ՛ մի անցք կամ դէպք խաղի առնելը, միայն մի քանի անձինքների միջոցով մի խօսակցութիւն է հարկաւոր սարքել մի ապօրէն գործ կատարելու համար: Այդ հայեցածքով իր թատեր առարկայ է